«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ե. ՉԱՐԵՆՑԻ ՁԱԽ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Վերժինե Ղազարյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գ. Գյուլբենկյանի անվան հ. 190 ավագ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 2

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր բնութագիր 4

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Անդեմ և անենթակա միակազմ նախադասություններ 5

Անվանական և բայական անդեմ նախադասություններ.....6

Անենթակա միակազմ նախադասություններ..... 10

Եզրակացություն..... 14

Օգտագործված գրականության ցանկ 15

Համառոտագրություն.....16

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հետազոտական այս աշխատանքով կարևորել ենք թեմայի բարդությունը սովորողների կողմից դժվարընկալելի լինելը, ավագ դպրոցի 10-11-րդ դասարաններում դրանց չանդրադառնալը,որը լուրջ խնդիրներ է առաջացնում հայոց լեզվի և գրականության պետական ավարտական քննության ժամանակ:

Նպատակ ենք ունեցել ներկայացնել միակազմ նախադասությունները, դիտարկել դրանց տեսակները, հնչերանգային առանձնահատկությունները ավելի բազմակողմանիորեն՝ քննության առնելով ոչ միայն հիմնական դպրոցի դասագրքերում ներկայացված նյութը, այլև թեմային անդրադարձած լեզվաբանների տեսակետները: Ուսումնասիրությունները կատարել ենք Եղիշե Չարենցի ձախ շրջանի ստեղծագործությունների շուրջ: Ըստ գլուխների առանձնացրել ենք միակազմ նախադասությունների տեսակները, դիտարկել քերականական առանձնահատկությունները, հնչերանգային, արտասանական նրբերանգները:

Բերված օրինակները բացառապես Չարենցի համապատասխան շրջանի ստեղծագործություններից են, չնայած առավել հարուստ ու բազմապիսի նմուշներ կային և՛ նախորդող, և՛ հաջորդող շրջանների ստեղծագործություններում:

Հետազոտական աշխատանքի ծավալային սահմանափակումը թույլ չի տվել ավելի մասնակիացնել ու խորացնել քերականական թեմայի համեմատական վերլուծական կողմը, ինչպես նաև մանրամասնորեն դիտարկել միակազմ նախադասությունների գեղարվեստական, ոճական արժեքը, կիրառման առանձնահատկությունները Չարենցի դիտարկված երկերում:

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ
Ընդհանուր բնութագիր

Շարահյուսության մեջ նախադասությունները առանձնանում են իրենց երկկազմ (երկբևեռ) և միակազմ (միաբևեռ) կառուցվածքներով: Երկկազմ նախադասությունների կառուցվածքային ինքնատիպությունն այն է, որ բառաքերականական տարբերակվածությամբ են արտահայտվում այստեղ և՛ առարկան (ենթակա), և՛ նրան վերագրվող հատկանիշը (ստորոգյալ): Օրինակ՝ Շողացին սվիններ, սրեր, Երգեցին կրծքեր հզոր (ԵՉ, ԱՊ): Վերոնշյալ օրինակներում սվիններ, սրեր, կրծքեր բառերը ենթականեր են, իսկ շողացին, երգեցին բառերը՝ ստորոգյալներ: Նույն տիպի են նաև այն նախադասությունները, որոնցում կարող են արտահայտված չլինել գլխավոր անդամները՝ ենթական կամ ստորոգյալը, բայց հեշտությամբ կարող են վերականգնվել ենթատեքստի հիման վրա: Օրինակ՝ Գնում էրԱստաֆյան փողոցով, Աչքերը հառել էր հեռուն (ԵՉ): Վերականգնելի ենթական է նա (Պողոսը), որը հստակ հասկացվում է ենթատեքստից: Այս տիպի նախադասությունները թերի են:

Երկկազմ նախադասությանը հակադրվում է միակազմ նախադասությունը, որում բացակա ենթական կամ դիմավոր բայը վերականգնելի չեն: Սա փաստորեն միակազմ նախադասության առանցքային հատկանիշն է, որով էլ այն բնութագրվում է որպես միաբևեռ: Օրինակ՝ Դրսում մութ էր, մրրիկ ու քամի (ԵՉ, Ասպ): Այս նախադասության մեջ ստորոգում կա՝ մութ էր, մրրիկ (էր), քամի (էր), այսինքն՝ կա քերականական դեմքի հատկանիշ, բայց անհնար է վերականգնել ենթական;

Միակազմ նախադասությունը կարող է լինել նաև անդեմ, այսինքն՝ չունենալ քերականական դեմքի հատկանիշ, և նորից անվերականգնելի լինի այն: Օրինակ՝ Տասնըութ: Թվական կյանքի… Իրիկուն: Վերադարձ: Առավոտ (ԵՉ, ՉՆ):

Եթե համեմատելու լինենք թերի և անենթակա նախադասությունները, պետք է նկատենք, որ թերի նախադասության մեջ չնայած արտահայտված է ամբողջական նախադասության միայն մի մասը, և զգացվում է մյուսի պակասը, սակայն հենց խոսքից հասկացվում է այդ պակասը, այսինքն՝ զեղչված ենթակայով նախադասությունը ըստ էության երկկազմ է, բայց թերի, իսկ անենթակա նախադասությունը միակազմ է, բայց ամբողջական:

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1.Անդեմ և անենթակա միակազմ նախադասություններ

Իրենց քերականական կառուցվածքային հատկանիշների հիման վրա միակազմնախադասությունները բաժանվում են երկու տեսակի՝ անդեմ միակազմ նախադասություններ, որոնք չունեն քերականական դեմք, և անենթակա (դիմավոր) միակազմ նախադասություններ, որոնք ունեն քերականական դեմք, բայց չունեն ենթակա, և այն վերականգնելի էլ չէ: Օրինակ՝ Հարկավոր է… Ո՞րը թվել (ԵՉ, Բ): Անհատնում կրակ: Արնաքամ վերքեր կարեվեր (ԵՉ, ՉՆ): Սրանք անդեմ միակազմ նախադասություններ են: Անենթակա միակազմ նախադասության օրինակներ են հետևյալները՝ Հազա՛ր են: Բյու՛ր են: Միլիա՛րդ են… Ավելի՛ն են (ԵՉ, Լ):

Խոսքը և այն պայմանները, որոնք առկա են խոսելիս, էական նշանակություն ունեն առանձնապես անդեմ նախադասության համար: Ինչպես առանձնացնում է Ս. Աբրահամյանը. «Նախադասության ինքնուրույնությունը բացարձակ չէ, այլ որոշ չափով հարաբերական: Միակազմ և հատկապես անդեմ նախադասություններին դա վերաբերում է մի փոքր ավելի, քան երկկազմ նախադասություններին»:[1]

Եթե քննարկենք Եղիշե Չարենցի ձախ շրջանի ստեղծագործություններում հանդիպող բայական անդեմ նախադասության բացառիկ օրինակներից մեկը՝ «Ում որ հարկն է. Տա՛լ մուժիկին մի զույգ կոշիկ», պիտի կարևորենք հեղինակի վերաբերմունքը, որը ենթադրում է իբրև պահանջ, կոչ կամ հրաման:

Իհարկե, միշտ չէ, որ միակազմ նախադասության հստակ և ստույգ ըմբռնման համար խոսքի պայմանները մեծ դեր են կատարում, նման նախադասության միտքը խոսքից դուրս էլ է ճշգրիտ հասկացվում: Օրինակ՝ Ոնց որ ուրագա՛ն է. Ոնց որ փոշի. Մշուշ է (ԵՉ, ԵԻ):

Այսպես՝ ուրագան է, մշուշ է, փոշի (է) անենթակա միակազմ նախադասությունների միտքը տեքստից դուրս էլ հասկանալի է և տարաբնույթ մեկնաբանությունների առիթ չի տալիս: Բայց եթե դիտարկենք անդեմ միակազմ նախադասություններ, ապա խոսքից դուրս

դրանք որպես նախադասություն դժվար կըմբռնվեն: Օրինակ՝ Ուրիշ ի՞նչ: Ոչի՛նչ(ԵՉ, ԼԱ):

1. Տես Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975, էջ 318:

Օրինակների ըմբռնման տարբերությունը ակնհայտ է, և պատճառը առաջին օրինակում դիմավոր բայաձևն է (հանգույցը), որը հնարավորություն ունի ստորոգելիի հետ գործածվելու:

Ինչպես նախորդ բաժնում սահմանեցինք, անդեմ միակազմ նախադասությունը չունի քերականական դեմք, և այն վերականգնելի չէ, այսինքն՝ նրա կազմում բացառված է բայի դիմավոր ձևերի ցանկացած դրսևորում:

Անվանական և բայական անդեմ նախադասություններ

Անդեմ միակազմ նախադասությունները իրենց հերթին բաժանվում են երկու ենթատեսակների՝ բայական անդեմ նախադասություններ և անվանական անդեմ նախադասություններ: Բաժանումը պայմանավորված է անդեմ միակազմ նախադասության գլխավոր անդամով: Բայական անդեմ նախադասության գլխավոր անդամն արտահայտվում է անդեմ բայով, հատկապես անորոշ դերբայով: Օրինակ՝ Ո՞րը թվել (ԵՉ, Բ): Վերոնշյալ անդեմ նախադասության գլխավոր անդամը թվել անորոշ դերբայն է:

Անվանական անդեմ նախադասության գլխավոր անդամն արտահայտվում է որևէ անուն խոսքի մասով, հատկապես գոյականի ուղղական հոլովով: Օրինակ՝ Օ՜, զուռնա՛, զուռնա՛, զուռնա՛… Տխրություն: Թախիծ դեղին: Նա: Նա: Նա (ԵՉ, ՊԶ): Ուրիշ ի՞նչ: Ուչի՛նչ (ԵՉ, ԼԱ):

Այս տիպի նախադասությունների ընկալման գլխավոր նախադրյալներն են հնչերանգը և խոսքի դրսևորման պայմանները:

Միակազմ նախադասությունները երկկազմ նախադասություններին հավասար ունեն շատ կարևոր ընդհանրական հատկանիշ՝ նախադասության հստակ հնչերանգ, հնչերանգային ավարտվածություն, որոնց շնորհիվ բառերի տվյալ կապակցությունը արտահայտվում և ընկալվում է որպես ավարտուն, ամբողջական նախադասություն: Եվ դա շատ կարևոր հանգամանք է, քանի որ ստորոգումը ավելի նվազ, ոչ ամբողջական դրսևորումներ ունի միակազմ նախադասությունների մեջ, ուստի այդ բացը լրացվում է հնչերանգի ընդգծվածությամբ:

Անվանական անդեմ նախադասությունները ավելի շատ դրսևորումներ ունեն գեղարվեստական խոսքում, քան առօրյայում, սակայն գեղարվեստական պատկեր ստեղծելու և ասելիքը դիպուկ նպատակաուղղելու համար մեծ վարպետություն է պահանջվում հեղինակից, ոչ թե ինքնանպատակ գործողություն:

Այդ առումով Ե. Չարենցի՝ հետազոտվող շրջանի ստողծագործությունները հարուստ նյութ են պարունակում անվանական անդեմ նախադասությունների օրինակների: Մի քանի շտրիխով Չարենցն իր ընթերցողներին է հասցնում ասելիքը, կտրուկ անցումներով տեսանելի դարձնում հերոսների գործունեության միջավայրը, երբեմն՝ ժամանակը և իրավիճակը: Իհարկե, հեղինակը կարող է ասելիքն արտահայտել երկկազմ նախադասություններով, բայց այդ դեպքում ոճական տարբերություններ կլինեն, մինչդեռ միակազմ նախադասություններով արտահայտելու դեպքում գեղարվեստական խոսքն առավել դիպուկ ու հակիրճ է, իսկ միտքը՝ ավելի խտացված:Օրինակ՝ Կամավոր: Հայկական բանակ: Հրացան: Թնդանոթ: Ռումբեր: Եվ ահա Այգեստանը Վանա: Եվ ահա Վարդան, Ռուբեն: Եվ ահա ընկերներ նոր-նոր Նյու Յորքից, Բասենից, Պոլսից: Մահ: Մահ: Մահ. Ընդհանուր, հանուր: Զինվորի, աղջկա, հարսի՝…Հունվար…՝Փետրվար… <u>Քսանըվեց</u> (ԵՉ, ՉՆ):

Անդեմ միակազմ նախադասությունները իրենց կազմում կարող են ունենալ նաև լրացումներ: Օրինակ՝ Ու զռռոցը Իշու, Էշան, Էշի… Ծույլ, Դանդաղ, Մի քնած էշի (ԵՉ, ԱՊ): Այս օրինակում զռռոց բառն ունի չորս հատկացուցիչ՝ իշու, էշան, էշի, էշի, և չորս որոշիչ, որոնք արտահայտված են ածականով, անորոշ դերանունով և հարակատար դերբայով:

Բայական անդեմ նախադասության մեջ բայական անդամի հավանական լրացումներ կարող են լինել: Օրինակ՝ Հարկավոր է…Ո՞րը թվել…(ԵՉ, ԿԱ): Ում որ հարկն է. Տալ մուժիկին մի զույգ կոշիկ (ԵՉ, Բ): Վերոնշյալ օրինակներում անորոշ դերբայով արտահայտված գլխավոր անդամներն ունեն իրենց բնորոշ լրացումները՝ ուղիղ խնդիր, հանգման անուղղակի խնդիր և այլն:

Անդեմ միակազմ նախադասությունները կարող են լինել պարզ համառոտ և պարզ ընդարձակ: Օրինակ՝ Ո՞րը թվել…(ԵՉ, Բ): Կարինե: Կարինե Քոթանճյան…Հիմար Կարինե (ԵՉ, ՉՆ): Հնարավոր է նաև բարդ նախադասության կաղապար ունենալ. Ի՞նչ. Ճառե՞ր. Հեռագի՞ր. Սու՞գ գուցե կամ (ԵՉ, Լ): Երբեմն հանդիպում են երկկազմ և միակազմ նախադասություններից կազմված բարդ

համադասական նախադասություններ: Դեպի ժամանակը. Մկան չկա հոգնած. Ես էլ, դու էլ, նա էլ (ԵՉ, ԵԻ): Քեզ խրատ, պոե՛տ, այստեղից. Օ՜, երբեք չերգես անտեղի (ԵՉ, ԵԻ): Հետաքրքիր իրողություն են բարդ ստորադասական նախադասություն ձևավորած անդեմ նախադասությունները: Այս դեպքում դեմքի քերականական հատկանիշ չունեցող նախադասությունը ունենում է քերականորեն լիարժեք ստորադաս նախադասություն: Օրինակ՝ Վա՛յ բոլորիդ, Ձեզ, որ գուրգուրում եք ձեր սիրտը սև (ԵՉ, ՊԶ): Երկիր, ուր մշուշ է ու մահ (ԵՉ, ԱՊ):

Սովորաբար անվանական և բայական անդեմ միակազմ նախադասություններն ունենում են գլխավոր անդամին համապատասխան լրացումներ, այսինքն՝ կախված նրանից, թե ինչ խոսքի մասով է արտահայտված գլխավոր անդամը՝ նրան համարժեք լրացումներից (գոյականով արտահայտված լինելու դեպքում՝ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, բայով արտահայտված լինելու դեպքում՝ խնդիրներ և պարագաներ): Սակայն քանի որ անդեմ նախադասությունների լիարժեք արտահայտման հնարավորություններն ավելի քիչ են, ուստի հնարավոր են նաև շեղումներ: Օրինակ՝ Քեզ խրատ, պոե՛տ, <u>այստեղից</u> (ԵՉ, ՊԶ): Թվական հրի Ողջակեզ, կարմրակեզ բոցում (ԵՉ, ՉՆ): Կոմուտատոր N Դեպի կաբինետը Իլյիչի (ԵՉ, Բ): Ընդգծվածները դերանունով, գոյականի ներգոյական հոլովով և կապ+կապի խնդրով արտահայտված տեղի պարագաներ են:

Բայական միակազմ նախադասությունները տարատեսակ դրսևորումներ ունեն՝ հրաման, իղձ, պահանջ, առաջարկություն, կոչ, հարցում և այլն:Օրինակ՝ Հարկավոր է… Ո՞րը թվել (ԵՉ, Բալլադ…): Ում որ հարկն է. Տալ մուժիկին մի զույգ կոշիկ (ԵՉ, ն. տ.):

Այս տեսակետից անդեմ միակազմ նախադասությունները չունեն երկկազմ նախադասությունների լայն հնարավորությունները: Նրանք չեն կարող հրամայական նախադասությունների բոլոր նրբերանգներն արտահայտել՝ նաև հորդոր, խնդրանք, ինչպես հետևյալ նախադասությունն է. Սովորել է հորից և գիտե նրանց երգը.
«Ելի՛ի՛ի՛ր-բողոքի՛ի՛ի՛ր- բանվո՛ո՛ո՛ր դասակա՛ա՛ա՛րգ (ԵՉ, ԼՔ):
Հարցական հնչերանգի բայական անդեմ նախադասությունները կարող են ոչ միայն տիպի օրինակներ Չարենցի այս շրջանի ստեղծագործություններում չկան:

Անվանական անդեմ նախադասությունները կարող են հնչերանգային հուզական տարբեր դրսևորումներ ունենալ՝ իղձ, երազանք, ափսոսանք, հարցում, կոչ և այլն: օրինակ՝Մանկությու՛ն… ոսկեթև՛ թռչուն… Դեղնավուն ոսկի՛ հինայի (ԵՉ, ՉՆ): Օ՛, երգե՛ր իմ Առաջի՛ն, Առաջի՛ն (ԵՉ, ն.տ.): Ի՞նչ, ճառե՞ր, Հեռագի՞ր. Սու՞գ գուցե կամ (ԵՉ, ԿԱ): Ի՞նչ շահ ձեր գանգի դհոլին Երգերից իմ՝ լույս ու լուսե (ԵՉ, ՊԶ): Հաղթանա՛կ գործին Իլյիչի (ԵՉ, ԼԱ):

Երբեմն անվանական նախադասությունների կազմում կարող են լինել ձայնարկություններ, վերաբերականներ. Սա զուտ հեղինակային մոտեցում է, որով ապահովվում է ասելիքի անմիջականությունը: Օրինակ՝ Վա՛յ ձեզ, Վա՛յ բոլորիդ (ԵՉ, ՊԶ): Էշը ահա. Չու՛-չու՛ Աստաֆյանի միջով (ԵՉ, ն.տ.): Օ՛, զուռնա՛, զուռնա՛, զուռնա՛ (ԵՉ, ն.տ.): Քիչ չեն դեպքերը, երբ կոչականի հետ կիրառվում են ողջույնի կամ հրաժեշտի խոսքեր: Լեզվաբանության մեջ վերջիններեռը համարվում են բառ-նախադասություններ: Օրինակ՝ Ողջու՛յն արխադաշ Ալուն: Հաղթանակ գործին Իլյիչի (ԵՉ, ԼԱ): Բարի լու՛յս, բանվո՛ր Պողոս (ԵՉ, ԱՊ):

Հնչերանգային առումով թարմություն է բերում ահա ցուցական վերաբերականը, որի կիրառությամբ անվանական անդեմ նախադասության գերադաս անդամը ստանում է որոշակիություն, ընդգծվածություն խոսքում: Ահա բառը սովորաբար ցույց է տալիս առարկայի գտնվելու վայրը, մատնացույց է անում այդ առարկան, ներկայացնում է; Այդ բառը կիրառվում է և՛ անձնանիշ, և՛ իրանիշ, և՛ ժամանակի, և՛ տեղի իմաստ արտահայտող բառերի հետ: Օրինակ՝ Ահա հայրս՝ հագին կապա… Ահա մայրս՝ Գլխին Թեհրանի լաչակ (ԵՉ, ՉՆ): Ահա Լոզանը, Ահա Ռուրը (ԵՉ, ԿԱ): Եվ ահա Սեպտեմբեր, Հոկտեմբեր (ԵՉ, ՉՆ): Ահա տոմսս (ԵՉ, ԵԻ):

Անվանական անդեմ մախադասությունները կարող են արտահայտել ժխտում. դրանք սովորաբար կազմվում են ոչ մի ժխտական դերանվամբ կամ ո՛չ…ո՛չկրկնադիր շաղկապով:

Ի միջի այլոց, եթե բոլոր երկկազմ նախադասությունների դրական ձևերից ժխտականներ հեշտությամբ են կազմվում, ապա ոչ բոլոր միակազմ նախադասություններն
են դառնում ժխտական. սա նրանց առանձնահատկություններից է:

Անենթակա միակազմ նախադասություններ

Դիմավոր միակազմ նախադասությանը անվանում են նաև անենթակա նախադասություն, որը առավել տարածված է դասագրքերում: Սակայն լեզվաբանության մեջ երկու մոտեցումներն էլ ունեն իրենց մեկնաբանությունը:

«…Անենթակա և անդեմ նախադասությունները՝ որպես միակազմ նախադասություններ, բնորոշվում են մեկ ընդհանուր հատկանշով (միակազմ կառուցվածքով) և դրանով տարբերվում են երկկազմից, «անենթակա» կոչվող նախադասության բնորոշ հատկանիշը պետք է որոշել՝ ի հակադրություն անդեմ նախադասության: Իսկ այդ հակադրության մեջ այն կարող է բնորոշվել դիմավոր հատկանշով»[1]:

Սակայն Գ. Ջահուկյանը անվանումները համարելով պայմանական, նշում է. «…Եթե անվերականգնելի է համարվում ենթական, այսպիսի նախադասությունը կոչվում է «անենթակա»:[2]

Մենք կառաջնորդվենք դպրոցական դասագրքով և այդ տիպի նախադասությունները կանվանենք անենթակա:

Անենթակա միակազմ նախադասություններում առկա է քերականական դեմք, որը արտահայտվում է բայի դեմքի քերականական հատկանիշով, սակայն պետք է նկատենք, որ ի տարբերություն երկկազմ նախադասությունների դիմավոր բայերի՝ դրանք ձևական դիմավոր հատկանիշներ են, քանի որ «այդ դեմքը չի կարող հակադրվել մյուս դեմքերին և նրանց հետ հարացուցային շարք կազմել»[3]: Օրինակ՝ Անձրևում է չի կարող հակադրվել անձրևում եմ, անձրևում ես ձևերին:

Ձեղչված ենթակայով նախադասության ստորոգյալը կարող է արտահայտվել նախադասության համապատասխան խոնարհված բայի ցանկացած ձևով, իսկ միակազմ նախադասության ստորոգյալ կարող են լինել խոնարհված բայի սահմանափակ ձևեր:

---

1. Տես Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականությունը, Երևան, 1975, էջ 440:
2. Տես Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 394:

1. Տես Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 39:

Կա նաև մեկ այլ տարբերություն: Անենթակա միակազմ նախադասությունը հակադրվում է զեղչված ենթակայով նախադասությանը նրանով, որ եթե ենթակայի զեղչումը կատարվել է ոճական առումով, և անհրաժեշտության դեպքում կարելի է վերականգնել, ապա անենթակա նախադասության ենթական հնարավոր չէ վերականգնել, որոշ դեպքերում սխալ է ուղղակի վերականգնելը, այսինքն՝ զեղչված ենթակայով նախադասությունը թերի է, իսկ անենթակա նախադասությունը՝ ամբողջական:

Անենթակա միակազմ նախադասությունները սովորաբար լինում են պարզ, համառոտ կամ ընդարձակ, սակայն կարող են հանդիպել նաև բարդ նախադասություններ, ընդ որում և՛ համադասական, և՛ ստորադասական, վերջինում էլ կարող է լինել և՛ գերադաս, և՛ ստորադաս: Օրինակ՝ Լեգենդ է, բայց խոր ու հատու (ԵՉ, Ս): Մտի՛ր, թե կուզես տեսնել, թե ոնց է հրճվում էֆենդին (ԵՉ, ն.տ.): Գիտե՞ք, թե աշխարհի արգանդից Ինչքան հանճարեղ մարդիկ… Եղել են, կան դեռ, ու կգան (ԵՉ, Լ):

Ըստ քերականական դեմքի իմաստի արտահայտման՝ անենթակա միակազմ նախադասությունները լինում են՝

1)ձևական անենթակա միակազմ նախադասություններ,
2)անորոշ անենթակա միակազմ նախադասություններ,
3)ընդհանրական անենթակա միակազմ նախադասություններ:

1.Ձևական անենթակա նախադասության ստորոգյալը դրվում է խոնարհված բայի երրորդ դեմքով: Կոչվում է ձևական, քանի որ դիմային հատկանիշը կրողը (առարկան) բացարձակ բացակայում է: Այդ տիպի նախադասությունները արտահայտում են ժամանակ, բնության երևույթներ, հոգեվիճակներ և այլն: Օրինակ՝ Դրսում մութ էր, մրրիկ ու քամի (ԵՉ, ԱՌ): Ոնց որ ուրագան է. Ոնց որ փոշի: Մշուշ է(ԵՉ, ԿԱ): Այդ օրը սուգ էր Մոսկովում (ԵՉ, ԼԱ): Հարկավոր է… Ո՞րը թվել (ԵՉ, Բ): Ում որ հարկն է. Տալ մուժիկին մի զույգ կոշիկ (ԵՉ, ն.տ.):

Այս տիպի նախադասությունների ստորոգյալը լինում է երկու տեսակի՝ բայական (գլխավոր անդամն արտահայտվում է բայի դիմավոր ձևով, օրինակ՝ մթնեց,

անձրևում է) և անվանական (գլխավոր անդամն արտահայտվում է բաղադրյալ ստորոգյալով, օրինակ՝ շոգ է, ամառ է): Առաջին տիպի նախադասություն չկա Չարենցի համապատասխան ստեղծագործություններում, սակայն երկրոդ տիպի նախադասությունների թիվը բավարար է: Օրինակ՝ Երևանն է (ԵՉ, ԵԻ): Բայց արդեն գիշեր է. ուշ է արդեն (ԵՉ, ԼԱ): Դրսում մութ էր, մրրիկ ու քամի(ԵՉ, ԱՌ):

Երբեմն հնարավոր է նման ստորոգյալներն արտահայտել հարադրությամբ՝ մութն ընկել էր: Բայց այս նախադասությունն էլ է միակազմ, քանի որ հարադրության մեջ մութը բաղադրիչը չի կարող ենթակա ընկալվել:

1. Անորոշ անենթակա միակազմ նախադասության քերականական դեմքի արտահայտությունը անորոշ է, չի հարաբերվում որոշակի առարկայի, այսինքն՝ բայի դիմային հատկանիշըչի ենթադրում ստույգ կատարող: Նույնիսկ որոշ դեպքերում թվի կարգն էլ է անհայտ, չնայած ստորոգումը հոգնակի թվով է արտահայտված: Գործողությունը կատարողի չդրսևորվելը երկու պատճառով կարող է լինել՝ 1)կատարողն անհայտ է խոսողին, 2)անհրաժեշտություն չկա նրան նշելու: Այս տիպի նախադասություններում ստորոգյալից ենթադրվող նրանք ենթական վերականգնելը բացարձակ սխալ է:

Անորոշ անենթակա միակազմ նախադասության գերադաս անդամը սովորաբար արտահայտվում է սահմանական եղանակի անցյալ կատարյալի, ներկայի, վաղակատարի հոգնակի երրորդ դեմքով: Օրինակ՝ Ասին՝ ինչքան աշխատավոր, Ինչքան բանվոր, ռանչպար որ կա, Էդ բոլորի մեծն է Լենին (ԵՉ, ՄՍՊ): Դե հայտնի է սաղ աշխարքին, Որ խեղճին են տանում կռիվ (ԵՉ, ն.տ.): Ճիշտ այդպես առկայծել է Պերան, Երբ նրանց տարել են Տրապիզոն (ԵՉ, Ս): Դիմել է մուժիկն ուրիշի, Ասել են՝ չի՛ք (ԵՉ, Բ:

Շատ քիչ է պատահում, որ գլխավոր անդամն արտահայտվի ներկայի եզակի երկրորդ դեմքով կամ ենթադրական եղանակով: Սակայն այս երկու տիպի օրինակներն էլ դրսևորվել են Չարենցի քննվող ստեղծագործություններում: Վերցնում ես քարը, մտածում ես. «Հետքեր է կրում նա ջրի…» (ԵՉ): Տարե՛ք ինձ Ֆ. Կ. Է. Էնտեղ ինձ խինդով կընդունեն: Կընդունեն, ոնց որ հարկն է (ԵՉ, ԿԱ):

2.Ընդհանրական անենթակա միակազմ նախադասությունների քերականական դիմային հատկանիշը վերագրվում է ոչ միայն տվյալ՝ իրենովարտահայտված դեմքին, այլև բոլորին՝ ընդհանրական իմաստով: Այդպիսի նախադասությունները հիմնականում առած- ասացվածքներ են:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ «Եզակի և հոգնակի երկրորդ դեմքով «անենթակա» նախադասությունները ունեն ընդհանրական դիմավոր արժեք»:[1] Օրինակ՝ Նայի՛ր. Անցել են դարե՛ր, դարե՛ր (ԵՉ, Ս): Տե՛ս: Մտի՛ր, Թե կուզես տեսնել, Թե ո՞նց է հրճվում էֆենդին (ԵՉ, ն.տ.): Ուզու՞մ եք՝ որպես գնդասեղ՝ արևը խրեմ փողկապիս (ԵՉ, ՊԶ): Երբեմն դրանք կարող են հարցում արտահայտել: Օրինակ՝ Կարո՞ղ ես խանգարել. – Հապա փորձի՞ (ԵՉ, Բ):

Ընդհանրական միակազմ անենթակա նախադասության ստորոգյալը կարող էլինել նաև բաղադրյալ՝ պիտի, պետք է, հարկավոր է, անհրաժեշտ է և նման եղանակիչներով ու անորոշ դերբայով, նման օրինակներում անորոշ դերբայը ենթակա դիտարկելը ճիշտ չէ, քանի որ դրանց թվարկման դեպքում պետք է, անհրաժեշտ է, հարկավոր է ձևերը քերականական թիվը չեն փոխում: Իհարկե, հնարավոր են նաև արտահայտման այլ ձևեր, ասենք, չեզոք սեռի բայից կազմված կրավորականով, սակայն նման օրինակներ Չարենցի ձախ շրջանի ստեղծագործություններում չկան:

1. Տե՛ս Գ. Ջահուկյան. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 396:

Եզրակացություն

Այսպիսով՝ վերը շարադրված հետազոտական աշխատանքում անդրադարձանք միակազմ նախադասություններին, նրանց տեսակներին, դրսևորման ձևերին, քերականական ինքնատիպությանը, ոճական առանձնահատկություններին: Փորձ ենք արել ներկայացնել հարցին անդրադարձ կատարած լեզվաբանների տեսակետները: Աշխատանքի բուն նյութին՝քերականական մեկնաբանություններին անցնելուց առաջ մանրամասնորեն ուսումնասիրել ենք թեման, կատարել ենք քարտային աշխատանք. Չարենցի ձախ շրջանի ստեղծագործություններից քարտավորմամբ դուրս ենք գրել միակազմ նախադասությունների տարաբնույթ օրինակները, խմբավորել ըստ տեսակների: Այնուհետև բուն աշխատանքն ենք կատարել՝ ներկայացնելով միակազմ նախադասությունները ամենատարբեր կողմերից: Վերջում կից ներկայացրել ենք օգտագործված գրականության ցանկը և կիրառված համառոտագրությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1963, 397 էջ:

2. Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1964, 373 էջ:

3. Ս.Վ. Գյուլբուդաղյան, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967, 211 էջ:

4. Գ.Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, 586 էջ:

5. Ս.Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975, 440 էջ:

6.Ս.Գ. Աբրահամյան, Վ.Դ. Առաքելյան, Վ.Ա. Քոսյան, Հայոց լեզու, II-րդ մաս, Երևան, 1975, 478 էջ:

7.Ս.Գ. Աբրահամյան, Ն.Ա. Պառնասյան, Հ.Ա. Օհանյան, Խ.Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան 1976, 856 էջ:

8.Հ. Խլղաթյան, Հայոց լեզու, 7-րդ դասարան, Երևան, 1999, 167 էջ:

9.Խ.Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2008, 363 էջ:

10. Հ. Զաքարյան, Յ. Ավետիսյան, Շարահյուսություն, Երևան, 2009, 242 էջ:

11. Հ.Խ. Բարսեղյան, Փ.Գ. Մեյթիխանյան, Հայոց լեզու, 9-րդ դասարան, Երևան, 2013, 160 էջ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՉ -Եղիշե Չարենց

ԱՊ – Ամենապոեմ

ԱՌ - Ասպետական ռապսոդիա

Բ- Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին

ԵԻ- Ես և Իլյիչը

Լ- Լենին

ԼԱ - Լենինն ու Ալին

ԼՔ - Լենին քեռին

ԿԱ - Կոմալմանախ

ՄՍՊ – Մաճկալ Սաքոյի պատմությունը

ՉՆ- Չարենց-նամե

Ս- Ստամբոլ